ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 757-Ա 16 դեկտեմբերի 2025 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ Ս. ՔՈՉԱՐՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԿՆՔՎԱԾ N 03 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի թ) կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Անուշ Մարտիրոսյանի հետ 2023 թվականի նոյեմբերի 17-ին կնքված N 03 պայմանագրի 5-րդ բաժնի 5.1-ին կետի 14-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանի 2025 թվականի դեկտեմբերի 15-ի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ 18549/25 գրությունը (2025 թվականի դեկտեմբերի 12-ի Մ-21786-2025) և թիվ ԳԴ/0024/01/19 քրեական գործով դատավճիռը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի ««Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Անուշ Մարտիրոսյանին արձակուրդ տրամադրելու մասին» N 735-Ա որոշումը

որոշում եմ՝

1. Հաշվի առնելով Անուշ Մարտիրոսյանի 2025 թվականի դեկտեմբերի 15-ից 2025 թվականի դեկտեմբերի 19-ը ներառյալ ամենամյա երկարացված արձակուրդում գտնվելու փաստը՝ 2025 թվականի դեկտեմբերի 22-ից

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Անուշ Մարտիրոսյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծելով նրա հետ 2023 թվականի նոյեմբերի 17-ին կնքված N 03 աշխատանքային պայմանագիրը՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտելու հանգամանքով պայմանավորված:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի դեկտեմբերի 22-ից:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ